ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՄԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՁԵՎԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Բազմապիսի վիմական արձանագրությունների թվում Հայաստանի ճարտարապետական հուշարձանների վրա հանդիպում են մի քանի յուրօրինակ ձևեր, որոնց փորագրման պատճառների սկզբունքային բացատրությունը կարող է հետաքրքիր լինել ճարտարապետության պատմությամբ զբաղվող մասնագետների համար։

Պեղումների ժամանակ Ջրվեժի եկեղեցու թմբուկի անկյունաքարերից մեկի վրա հայտնաբերվել են ՅՈՀ[ԱՆ] անվան արձանագրության առաջին երեք

տառերը։ Արձանագրության տառաձևերը VI—VII դարի են։ Հնագրական առումով առանձնապես բնորոշ է Յ տառը՝ իրար վրա դրված հավասարաչափ կիսարոլորներով, առանց պարուրվող փոքր ելուստների, միջին հորիզոնական ստեղնի երկարավունությամբ և համաչափությունների ընդլայնական շեշտով։ Միաժամանակ այս տառաձևերը չափազանց նման են Ավանի եկեղեցու պատին փորագրված նույն ՅՈՀԱՆ անվան տառաձևերին։ Նկատի առնելով այս երկու արձանագրությունների հնագրական ընդհանրությունը, ինչպես նաև ՅՈՀԱՆ անվան նույնությունը Ն. Տոկարսկին հնարավոր է համարել շինությունը թվագրել Յոհան Սյունական հակաթոռ կաթողիկոսի ժամանակներով (590—611)[1]։

Արձանագրությունների ընդհանրության հիման վրա եկեղեցու թվագրումը չափազանց կարևոր է, որովհետև դրանով հնարավոր է լինում այս եկեղեցու հորինվածքի ակունքները ևս որոնել VI դարում։

Ամենևին չվիճարկելով այս և Ավանի եկեղեցիների թվագրման հարցը, մանավանդ, որ վերջինիս վերաբերյալ գոյություն ունեն անհերքելի մատենագրական վկայություններ, ցանկանում ենք արձանագրությունների վերաբերյալ մի բացատրություն տալ։

Առանձին անվան ձևով արձանագրություններ հանդիպում են Հայաստանի մի շարք հուշարձաններում։ Առավորաբար դրանք փորագրվել են բավական խոշոր ու գեղեցիկ տառերով և ըստ այնմ ունեցել են որոշակի կարևորություն։ Այնքանով, որ արձանագրություններին վերագրված են կտիտորական իմաստ և, եթե նկատի առնենք նրանց ոչ եզակի դեպքերը, պետք է ենթադրել, որ կտիտորի անվան այդօրինակ արձանագրումը ունեցել է սովորույթի բնույթ։

---

[1] Н. М. Токарский, Джрвеж, I. Результаты раскопок, Ереван, 1957, стр. 15.

Սակայն համեմատական քննությունն այս հարցում թույլ է տալիս անել մի այլ, էապես տարբեր մեկնություն։ Այն շինությունների վրա, որոնք կառուցվել են տեղական համայնքների, պետական կամ եկեղեցու միջոցներով, շինարարական արձանագրություն չի փորագրվել։ Իսկ եթե շինարարական աշխատանքները նախաձեռնվել են որևէ մարդու կամ մի խումբ մարդկանց միջոցներով, ապա եկեղեցու պատին կամ որևէ կոթողային հուշարձանի վրա այդ մասին արձանագրվել է ընդարձակ կամ չափավոր մի արձանագրություն։

Արձանագրություններ, առհասարակ, փորագրվել են ամենատարբեր առիթներով և բոլորն էլ ունեն որոշակի բովանդակություն։ Այդ հիման վրա նրանք դասվում են այս կամ այն հարցերին վերաբերողների թվին՝ շինարարական, նվիրատվական և այլն։ Արձանագրություն թողնելը ունեցել է միանգամայն նպատակային, ավանդական սկզբունք, և դրա իրավունքը վերապահվել է միայն եկեղեցուն, ինչ որ ձևով նպաստ կամ բարեգործություն կատարողներին։ Այս տեսակետից առանձնապես հատկանշական են շինարարական արձանագրությունները և հազիվ թե որևէ կառուցող իր մեծածախ աշխատանքների դիմաց համաձայնվեր իր անվան այդպիսի անորոշ ու մեկուսի ձևով հիշատակման հետ, մանավանդ, եթե նա բարձր աստիճանավոր էր։

Նկատի առնելով արձանագրման պրակտիկ պահանջները և սկզբունքները, այս տիպի արձանագրությունները կտիտորների անուն համարել չի կարելի։ Դրանց առկայությունը, անտարակույս, վկայում է, որ գոյություն է ունեցել արձանագրման ևս մի պրակտիկա՝ միանգամայն տարբեր նպատակով։ Դրանք պատահական մարդկանց անուններ չեն, որովհետև նախ՝ հուշարձանի վրա մեկից ավելի չեն լինում և երկրորդը գրության ձևով էլ աչքի են ընկնում միատեսակ գեղեցիկ տառերով։ Այստեղ չեն եղել նաև եկեղեցու ծառայողների անուններ, որովհետև հիշատակման այդ եղանակի դեպքում դա զուրկ է որևէ իմաստից, մանավանդ որ վիմագրական բազմապիսի նյութերում նրանք հիշատակվում են իրենց կատարած գործերի մասին տեղեկություններով։

Շինությունները կանգնեցվել են ինչ-որ մեկի միջոցներով, և արձանագրության մեջ «շինեցի» բառը, ինչպես պարզաբանել են ուսումնասիրողները, հարկավոր է ըմբռնել նպաստավորեցի իմաստով[2]։ Այս արձանագրություններում նպաստավորողը հանդես է գալիս որպես հիշատակվող ամենագլխավոր անձը։ Ինչ վերաբերում է իսկական շինողին՝ ճարտարապետին և շինարար վարպետներին, ապա նրանք արձանագրություններում հիշատակվում են խիստ հազվադեպ և այն էլ վերջում։ Երբեմն նրանց հնարավորություն է տրվել շինության որևէ մասում կարճառոտ մի հիշատակություն թողնել[3]։ Այդպիսի մի օրինակ կարելի է տեսնել Հառիճավանքի արևելյան պատի քիվի վրա։ Ըստ էության նույնպիսի բնույթ ունեն նաև վարպետների նշանները, թեև պատճառը կարող է այլ լինել[4]։ Սակայն, բոլոր դեպքերում, ինչպես և վարպետների նշանները, դրանք կրում են ստորագրման բնույթ։ Այդպես են փորագրվել նաև բազմաթիվ գրիչների անուններ, որոնք, սակայն, կապված լինելով արձանագրության հետ, ուղեկցվել են նաև «գրիչ» բառով։ Այս ամենից պարզ է, որ հիշա-

2 И. А. Орбели, Избранные труды, էջ 477—481։

3 Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պր. III, Երևան, 1967, էջ 121։

4 Ս. Մնացականյան, Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցերը և քարագործ վարպետների նշանները, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 84—105։

տակությունը արվել է կատարված գործի համար։ Ո՞րն է եղել հիշատակված անձանց գործը։ Ինչպես ցույց են տալիս մի քանի պարզաբանված օրինակներ, դրանք կարող էին միայն ճարտարապետներ-վարպետներ լինել։ Վարպետների նշանների նման նրանց անունները հիշատակվել են նաև տառակցման կամ անվան առաջին տառի ձևով։ Այդպես է հիշատակված Թոդոսակի անունը Ջվարիում։ Սակայն Հանդիպում են նաև ամբողջական անվան ձևով, ինչպես, օրինակ, Ջվարթնոցում։ Այդպիսի բացատրություն է տվել Գ. Հովսեփյանը նույն ձևով հիշատակված ՍԱՀԱԿ անվանը Պտղնիի եկեղեցու վրա։

Այդպիսի արձանագրության մի օրինակի էլ հանդիպում ենք Դառնահովիտի եկեղեցու պատին, որտեղ պահպանված է ՎԱՐԴԵՍ անունը, ինչպես և նույն օրինակով ԳՐԻԳՈՐ ԳՐԻՁ-ը։

Իրենց հնագրական առանձնահատկություններով այս արձանագրությունները բոլորովին չեն տարբերվում VII դարի արձանագրություններից։ Դրանցից երկուսը հիշատակում են միայն մեկ անուն՝

ՎԱՐԴԵՍ, մյուսը տառակցման ձևով։ Երրորդը՝ ԳՐԻԳՈՐ ԳՐԻՁ։

VII դարի համար չափազանց տիպական է Վ տառը։ Այն պատկերված է երկու իրար բացարձակապես հավասար ստեղներով, որպիսին անվերապահորեն բացակայում է հետագա, նույնիսկ հնագրական պատճեններում։ Տառակցման օրինակում, չնայած տառաձևերը կրկնելու ջանքերին, հետագա գրչին չի հաջողվել հաշվի առնել տառի հնաձևության այդ առանձնահատկությունը, և աջակողմյան ստեղնը դեպի ներքև երկարեցված է։

Ա սաոր իր հռասաեղնությամբ և համաչափություններով վերին աստիճանի բնորոշ է VII դարի համար։ Ս և Ր տառերը ժամանակագրական հատկանիշ չունեն։ Դ և Ե տառերը իրենց հորիզոնական ստեղների երկարավունությամբ ամբողջացնում են արձանագրության ժամանակագրական այն կերպարը, որը կասկած չի թողնում արձանագրությանը VII դարով թվագրելու հարցում։

Թեև այս արձանագրության հիման վրա անհնար է գոնե մոտավորապես որոշել եկեղեցու կառուցման տարեթիվը, սակայն նրա VII դարին պատկանելը կարող է հաստատուն լինել և կողմնորոշել տարեթիվը այդ դարի սահմաններում որոնելու համար։

Ելնելով այս տվյալներից կարծում ենք, որ կարելի է ՎԱՐԴԵՍ-ին համարել Դառնահովիտի, իսկ ՅՈՀԱՆ-ին Ավանի ու Ջրվեժի եկեղեցիների ճարտարապետ, թերևս և ճարտարապետներ, վարպետներ, որովհետև նրանք կարող են նույն անունը կրող տարբեր անձնավորություններ լինել։

Եթե նկատի առնենք քարաղործ վարպետների նշանների ավանդական երևույթը, ճարտարապետի անվան ամբողջական գրառման նախապատվությունը միանգամայն բնական պետք է համարել։

---

5 Գ. Հովսեփյան, Նյութեր..., պր. Գ, էջ 27։

Գեղեցիկ տառերով գրված և շինության որևէ արձանագրության հետ չառնչված այս հիշատակությունները այլ բացատրություն ունենալ չեն կարող[6]։

Այս վիմագրական հիշատակարաններից հայտնի են դառնում ևս մի քանի հուշարձանի ճարտարապետների անուններ, որոնք եղածն համալրելով, կարևոր նյութ են հանդիսանում «թե՛ հուշարձանների կատարյալ և ամբողջական ուսումնասիրության, և թե՛ միջնադարյան կուլտուրայի կերտողներին ընդհանրապես ճանաչելու տեսակետից»[7]։

ОБ ОДНОЙ ТРАДИЦИОННОЙ ФОРМЕ НАДПИСЕЙ

А. А. МАНУЧАРЯН

Резюме

В научной литературе укоренилась точка зрения, что в аванской надписи высечено имя католикоса Иоанна—ктитора этой церкви. Ктиторские надписи обычно высекались в том случае, если здание возводилось на средства одного человека или группы людей и если они имели целью увековечить имя строителя.

Имея в виду практические требования, предъявлемые к надписям, эти надписи ктиторскими считать невозможно. Сравнительный материал и некоторые объясненные примеры свидетельствуют, что здесь могло быть упомянуто только имя архитектора.

Имя архитектора встречается весьма редко и обычно изолировано, а иногда даже в виде одной только буквы.

В виде полного имени можно видеть в Звартноце. Такое объяснение дает Г. Овсепян имени Саак, которое высечено иа стене церкви в Птгни. Точно такой же пример можно встретить в Гарнаовитской церкви, которую, как показала надпись, построил Вардес.

Согласно палеографическим особенностям всех надписей, они высечены в период VI—VII вв.

---

6 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 22։

7 Նույն տեղում, էջ 14։